**ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

***Արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ, ՀԺ, ՀԹԳ, ՀԿ միությունների, ՀԵ ընկերության անդամ***


Լորիս Ճգնավորյան

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ ՎԵՐ Է ԱՄԵՆ ԻՆՉԻՑ

*Նյու-Յորքի «Քառնգի հոլ»-ը լեփ-լեցուն էր ունկնդիրներով: Հայաստանում 1988 թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած աշխարհացունց երկրաշարժի աղետյալների օգտին կազմակերպված բարեգործական համերգին մասնակցում էին աշխարհի հանրահայտ երաժիշտներ Լուչիանո Պավարոտտին, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Պ. Բուրչուլաձեն, Ելենա Օբրազցովան և հանրաճանաչ շատ անուններ:*

*Այդ արժանահիշատակ համերգը կազմակերպվել էր արտերկրում մասամբ նաև Հայրենիքում հայտնի կոմպոզիտոր, դիրիժոր Լորիս Հայկազի Ճգնավորյանի նախաձեռնությամբ և ջանքերով:*

*Եվ ղեկավարած յուրաքանչյուր համերգի ընթացքում Լ. Ճգնավորյանն իր և նվագախմբի յուրաքանչյուր կատարողի սրտի խուքն էր ասում հայ և օտարազգի երաժշտասերին, դրանով իսկ արդեն գտնելով նրանցից ամեն մեկի հոգու բանալին, սփոփիչ ու նաև ոգևորիչ խոսք ասելով նրանց (հայրենասիրության բաժակը լցվել էր, մթնոլորտը եռում էր):*

*Իսկ ներկայացվող ծրագրերը հարուստ էին, որովհետև այդ 35 համերգներին Հայաստանի պետական նվագախմբի հնչեցրած ստեղծագործությունները կատարվեցին, և նաև մինչև այդ չկատարված, որ երևի, այլ պայմաններում, երկար ու ձիգ տարիներ էին պետք այդպիսի ահռելի ծրագիր իրականացնելու համար:*

*Հենց նրա նվագավարությամբ էլ տեղի ունեցավ այդ հեղինակավոր և բացառիկ, իր տեսակի մեջ հետաքրքրական համերգը, որից ստացված հասույթն ամբողջությամբ փոխանցվեց աղետի գոտի: Հիշարժան այդ համերգից ընդհամենը մեկ ամիս անց Երևանի Արամ Խաչատրյանի անվ. համերգասրահում, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ հյուրախաղերով հանդես եկավ Լ. Ճգնավորյանը:*

*Համերգից հետո, նվագախմբի երաժիշտներն մեծ հաջողությունից ոգևորված, հոռչակավոր հայորդուն խնդրանքով առաջարկեցին աշխատել իրենց հետ (առաջարկը հաստատեց «Հայհամերգ» գործակալության գլխավոր տնօրեն՝ Սերգեյ Բագրատի Սմբատյանը): Հայրենանկարոտ երաժիշտն առանց երկար-բարակ մտածելու, տվեց իր համաձայնությունը: Եվ հաջորդ՝ 1988-1989 թվականների համերգաշրջանի անդրանիկ համերգից սկսած, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորն էր Լորիս Ճգնավորյանը: Առաջին համերգաշրջանում 35 համերգ ունեցան և այն էլ ութ ամսում իրականացված, դրան հավելած 15 օր տևողությամբ ուղևորություն Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Այո, 35 համերգ: Ամեն ուրբաթ, յուրահատուկ ու ինքնատիպ մի երեկո էր պարգևում մաեստրո Լ. Ճգնավորյանը երևանցի երաժշտասերին և ոչ միայն նրան:*

*Այսպիսին է Լ. Ճգնավորյանի համերգային առաջին «մարաթոնը» Հայրենիքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ:*

*Ամեն ուրբաթ, փաստորեն, մենք ներկա էինք լինում երկու համերգի՝ հիմնական ծրագիր, և ապա՝ դիրիժորի, նվագախմբի և հանդիսատես-երաժշտասերի մերձեցմանը նպաստող այնպիսի մի գեղեցիկ մեկնաբանման, որ գերում էր բոլորին: Եվ հենց այս պատճառով է, որ Արամ Խաչատրյանի անվ. համերգասրահն ամեն ուրբաթ լեփ-լեցուն էր: Եվ միշտ այդպես էր, որովհետև մեծատաղանդ մաեստրո Լորիս Ճգնավորյանը, ինչպես ինքն էր անմնացորդ նվիրվում իր արվեստին, իր գործին, երաժշտությանը, այնպես էլ պահանջում էր նվագախմբի յուրաքանչյուր երաժշտից:*

*Այո, այսպես պետք է աշխատի յուրաքանչյուր հայ, ով սիրում է իր Հայրենիքը և այն ամեն ինչից վեր է դասում:*

*Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի այն ժամանակ դասախոս, Նաթան Վարդապետ Հովհաննիսյանի խոսքը մեջբերենք.* «Անշուշտ կպարտինք Լորիս Ճգնավորյանի տաղանդին և բարձր արվեստին: Նա կարողացավ մեր ֆիլհարմոնիկ դահլիճում ստեղծել մեծ արվեստի հաճույքը: Շատերն արդեն համերգ են գալիս ոչ միայն պարզապես համերգի, այլ մեծ հաճույք ստանալու և երաժշտության պարգևած երանությունը վայելելու համար:

Լորիս Ճգնավորյանն այնպիսի երաժիշտ է, որն իր հայրենասիրությամբ չի կարող չխանդավառել որևէ մեկին և նույնիսկ, կարծում եմ, ոչ երաժիշտներին: Նա կարողացավ հայ երաժշտական մշակույթը, ամենակարճ ժամանակամիջոցում, հասցնել

որոշակի նշանակալի մակարդակի: Եվ, իհարկե, շատ ուրախ ենք, որ ինքը, բացի այս նվագախմբի ղեկավարը լինելուց, նաև ստեղծագործում է և արարում յուրահատուկ ոճով, և իր հորինվածքների մեջ շատ խորը հայկական ոգի կա:

Շատ ուրախ և հպարտ եմ, որ մեր սիմֆոնիկի ձանը հասավ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, հասավ այնպիսի վայրեր, որտեղ չես զարմացնի նույնիսկ վիրտուոզ կատարումով: Բայց անգամ ամերիկյան մայրցամաքում նրա շնորհիվ մենք հաղթանակ տարանք՝ հոգևոր հաղթանակ: Ուրեմն, հայկական մշակույթը, մասնավորապես երաժշտականն, ունի զուլալ ակունքներ և բեղուն մշակներ, ինչպիսին է Լորիս Ճգնավորյանը»:

*Հայտնի է, որ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբն Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ իր բոլոր համերգները նվիրել է հայ հոգևոր և ժողովրդական տոնահանդեսներին՝ «Սարդարապատի ճակատամարտին», «Մայիսի 28-ին», «Զորավար Անդրանիկին», «Ֆիդայիներին», «Հայ մայրերին», «Ավագ Ուրբաթին», «Զատկին», գիտության և մշակույթի անվանի գործիչներին և այլն: Նույնը շարունակվեց 1990-1991 և հաջորդ թվականների համերգաշրջաններում:*

*Երևանի պատվավոր քաղաքացի, անխոնջ հայրենասեր, Սուրբ Մեսրոպ և Սուրբ Սահակ շքանշանակիր Լորիս Ճգնավորյանն անսահման նվիրումով նոր որակ էր հաղորդում հայ մշակույթին՝ հայ երաժշտական արվեստին ընդհանրապես, ջգտելով այն հասցնել միջազգային մակարդակի: Այդ են վկայում նվագախմբի համերգային ուղևորությունները ԱՄՆ, Գերմանիա, Ավստրիա, Հունաստան, Ֆրանսիա, ապա Եվրոպայի զանազան երկրներ:*

*Շուրջ 10 տարի տևեց Լ. Ճգնավորյանի բեղմնավոր աշխատանքը Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ: 1991 թ. սեպտեմբերի 16-ի նվագախմբի ընդհանուր ժողովում, երաժիշտների որոշմամբ, Լորիս Ճգնավորյանի առաջարկությամբ սիմֆոնիկ նվագախումբը վերանվանվեց պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (այսօր Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, - Վ.Թ.):*

*Անչափ հետաքրքրական է Հայաստանում սիմֆոնիկ նվագախմբի (նվագախմբերի) ստեղծման պատմությունը:*

*1924 թվականի վերջերին Երևանի կոնսերվատորիայի երկրորդ վերատեսուչ (տնօրեն)՝ գեղագետ, դաշնակահար, կոմպոզիտոր, հետագայում նաև դիրիժոր Արշակ Ադամյանը կոնսերվատորիայի դասատուներից և աշակերտ-ուսանողներից սիմֆոնիկ նվագախումբ ստեղծեց, որի անդրանիկ համերգը տեղի ունեցավ 1925 թ. մարտի 20-ին: Կոնսերվատորիայի դասախոսական խորհրդի որոշմամբ, այդ օրը հռչակվեց Հայաստանում սիմֆոնիկ նվագախմբի հիմնադրման օր: Համերգից առաջ ելույթ ունեցավ Սպիրիդոն Մելիքյանն ու իր խոսքն այսպես ավարտեց.* «Այսուհետ, ծեր Արարատի ստորոտում էլ կհնչի սիմֆոնիկ երաժշտություն»:

*Շուտով, Արշակ Ադամյանին «փոխարինեց» Անուշավան Տեր-Ղևոնդյանը: Նա էլ նվագախմբի ղեկավար հրավիրեց Սուրեն Չարեքյանին Թբիլիսիից, չնայած նվագախմբի համերգները ղեկավարում էին Ալեքսանդր Սպենդիարյանը և ջութակահար, նվագախմբի կոնցերտմայստեր Հովհաննես Հովհաննեսյանը (Իվան Օզանեզով), ապա Մոսկվայի կոնսերվատորիան ավարտելուց հետո՝ Երևանի կոնսերվատորիայում աշխատանքի և նվագախումբը ղեկավարելու հրավիրվեց նաև Կոնստանտին Սողոմոնի Սարաջյանի սան՝ Գևորգ Երվանդի Բուդաղյանը: Մինչև այդ Ռոմանոս Մելիքյանի և Սպիրիդոն Մելիքյանի ջանքերով կոնսերվատորիայում երգչախումբ էր ստեղծվել, իսկ Անուշավան Տեր-Ղևոնդյանի նախաձեռնությամբ 1927 թ. հիմնադրրվել էր օպերային ստուդիան, որի հիման վրա էլ 1932 թ. գարնանը, մայիսի 17-ին հիմնադրվեց հայ իրականության մեջ առաջին օպերային թատրոնը, իսկ բացումը տեղի ունեցավ 1933 թ. հունվարի 20-ին Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայով: Բեմադրրությունն ու բեմական փորձերը մայիսից սկսած ղեկավարում էր Գ. Ե. Բուդաղյանը, պայքարելով նաև Հայաստանում օպերային թատրոնի բացումը նշանավորել հայկական օպերայով (Տ. Չուխաջյանի «Արշակ Բ» օպերան անհայտ էր Սովետական Հայաստանում): Այսպես, 1925 թ. ստեղծված նվագախումբը դարձավ օպերային, այն միաժամանակ շարունակում էր ինքնուրույն համերգային ծրագրերով հանդես գալ:*

*1935-ին, Երևանի կոնսերվատորիայի տնօրեն հրավիրվեց մեծանուն դիրիժոր՝ Կ. Ս. Սարաջյանը, նա էլ հիմնադրեց ուսանողական երկրորդ նվագախումբը: Այս նվագախումբն էր, որ 1941-ին պետական կարգավիճակ ստացավ, գլխավոր դիրիժորն էր Լենինգրադի (Ս.-Պետերբուրգ) Ն. Ռիմսկի-Կորսակովի անվ. կոնսերվատորիայի շրջանավարտ Իսպիր Խարաջանյանը: Իսկ 1944-ի ամռանը, երբ ֆաշիստական հորդաները Խորհրդային Միության սահմաններից դուրս շպրտվեցին, այդ նվագախմբի օտարազգի երաժիշտներ, բացառությամբ տեղացիների հետ նաև մի քանի երաժշտի, մեկնեցին իրենց հայրենի ազատագրված քաղաքները և նվագախումբը լուծարվեց: Հայ ֆիլհարմոնիայի իր գործի նվիրյալ, տնօրեն՝ Գրիգորի Սավելի Դոմբաևը (Դոմբայանց, դաշնակահար, երաժշտագետ, հետագայում Գորկու (այժմ՝ Նիժնի Նովգորոդ) կոնսերվատորիայի տնօրեն), նոր նվագախումբ կազմելու և ղեկավարելու հրավիրեց Մոսկվայի Ս. Շացկու անվ. օպերային ստուդիայի գլխավոր դիրիժոր՝ Միքայել Մալունցյանին: Այդ նվագախումբն էլ գործում է 1945-ի նոյեմբերից մինչև օրս: Մ. Մալունցյանն իր ստեղծած նվագախմբի հետ, որի կատարողական արվեստը հասցրեց միջազգային մակարդակի, աշխատեց մինչև 1960 թ., երբ Հայաստան եկած (1957-ին Մոսկվայում կայացած երիտասարդության և ուսանողների համաշխարհային փառատոնին մասնակցելու), Հայաստան եկած նվագախմբի երկրորդ դիրիժոր, երիտասարդ Օհան Դուրյանին նշանակեցին գլխավոր դիրիժոր (բազմավաստակ մանկավարժին ու հմուտ դիրիժորին 67 տարեկանում ազատեցին աշխատանքից):*

*Այնուհետև նվագախմբի ղեկավարներ են եղել՝ Միքայել Տերյանը, Արամ Քաթանյանը, Ռուբեն Վարդանյանը (Զավեն Վարդանյանի որդին), այսօր Երկիր մոլորակի թիվ մեկ դիրիժոր Վալերի Գերգիևը, Ռաֆայել Մանգասարյանը, երիտասարդ խոստումնալից դիրիժոր Վահագն Պապյանը, այսպիսով 17 դիրիժոր:*

*Մեծապաղանդ դիրիժոր Դավիթ Խանջյանը պաղանդի ծաղկուն շրջանում հրաժեշտ տվեց կյանքին, մահկանացուն կնքելով իր կատարողական արվեստի գագաթին հասնելու ճանապարհին:*

*Շուրջ տաս տարի Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ աշխատեց Լ. Ճգնավորյանը՝ թողած իր տաքուկ անկյունը Ավստրիայում, կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Սպիտակի սահմռկեցուցիչ երկրաշարժից հետո եկավ Հայաստան և ինքնակամ ընդունեց նվագախմբի հետ աշխատելու Հայֆիլհարմոնիայի գըլխավոր տնօրինության (Ս. Բ. Սմբատյան) և ՀՊՄՆ երաժիշտների խնդրանք առաջարկը: Առանց վայրկյան իսկ կորցնելու լծվեց աշխատանքի և փլատակված, ավերակված նվագախումբը, որը կործանման եզրին էր, հասցրեց միջազգային մակարդակի:*

*Ընդամենը մի քանի ամսվա տքնաջան աշխատանքից հետո ի զարմանս նույնիսկ երաժիշտների, նվագախումբը հասավ նշանակալի վերելքի. իր գոյության 67 տարիների ընթացքին երբևէ արտասահմանյան հյուրախաղեր չէր ունեցել, նրանք ճանապարհվեցին ԱՄՆ:*

*Այո, հանդես էր եկել Խորհրդային միության տարբեր քաղաքներում, նույնիսկ մեծ հաջողությամբ մասնակցել (1956 թ.) Մոսկվայում կայացած «Հայկական մշակույթի և գրականության տասնօրյակ»-ին, Հանրապետության իշխանությունների, Մշակույթի նախարարության, կոմպոզիտորների միության և կառավարության նախաձեռնությամբ ու միջոցներով:*

*Լ. Ճգնավորյանի ղեկավարության երկրորդ տարում, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը համերգներով 5 անգամ հանդես եկավ արտերկրում՝ Ավստրիայում, Գերմանիայում, Հունաստանում: Եվ ամենուրեք արտակարգ հաջողություն, ջերմ ընդունելություն և բարձր գնահատումներով գրախոսականներ: Նույն պատկերը և նրա գործունեության 3-րդ, 4-րդ, 5-րդ և հաջորդող տարիներին:*

*Ի դեպ, Լ. Ճգնավորյանի ղեկավարության 2-րդ համերգաշրջանում, նվագախմբի հովանավորությունը մեծահոգաբար ստանձնեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը՝ տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանի ղեկավարությամբ (և շարունակվեց գրեթե 10 տարի), որ նշանակում էր Հայաստանի պետական չնչին աշխատավարձից մի քանի անգամ բարձր վարձատրություն, ավելացրած դրան հյուրախաղերից և միջազգային ֆիրմաների ձայնագրություններից ստացված հոնորարները և նվագախմբի յուրաքանչյուր երաժշտի հասանելիքը ամսական շոշափելի գումար էր կազմում, որի մասին Հայաստանի Հանրապետությունում այդ տարիներին և ոչ մեկ երաժիշտ անգամ երազել չէր կարող:*

*Այո, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը հատուկ ձայնապնակի համար երբեք չէր ձայնագրվել, բայց, այսօր, շուրջ 100 լազերային ձայնասկավառակի հեղինակ է, ստեղծվել էր 80 երգչից բաղկացած քառաձայն երգչախումբ, սիմֆոնիկ երկրորդ նվագախումբ (Լ. Ճգնավորյանի ջանքերով, սակայն 2000 թ. ղեկավարության «փոփոխության» հետ լուծարվեցին): Գյումրիում Լ. Ճգնավորյանի ջանքերով գործում են սիմֆոնիկ նվագախումբը, քառաձայն երգչախումբը, փողային նվագախումբը, պարարվեստի անզուգական վարպետ Աղասի Շաբոյանի ղեկավարած ժողովրդական երգի-պարի անսամբլը:*

*Չլիներ Լորիս Ճգնավորյանը, չէին լինի նաև դարի Ուխտագնացությունը, Հայաստանի Հանրապետության օրհներգը, Տերունական «Հայր մեր»-ի ամեն ուրբաթյա կատարումը, ամեն շաբաթյա «Հոգևոր երաժշտության ժամ» կիրակնօրյա համերգները (դիրիժոր Գևորգ Մուրադյանը, այսօր ղեկավարում է Արցախի պետական կամերային նվագախումբը), որոնք հարյուրավոր պարտիտուրաներ նվիրեցին հայ երաժիշտներին և երաժշտասերներին, որոնց մասին երազել անգամ չէինք կարող, 11 տարի շարունակ լեփ -լեցուն պահեցին Արամ Խաչատրյանի անվ. համերգասրահը:*

*Երևանում, դարավերջին հացի ողբերգական հերթերն ու վիճակն այսօր մոռացել ենք, հարգելի ընթերցող, իսկ քեզ հայտնի՞ է, որ այդ ժամանակ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի յուրաքանչյուր երաժիշտ և դահլիճի աշխատակից հատուկ տոպրակով անվճար լավաշ էր ստանում, Լ. Ճգնավորյանի նախաձեռնությամբ և հատուկ պատվերով, նաև հավելյալ, մեկական պարկ ալյուր, անվճար, որպեսզի նվագախմբի երաժիշտն ավելորդ ժամանակ չվատնի (գիշեր ցերեկ), մասնագիտությամբ պարապի և բարձրացնի իր կատարողական վարպետությունը: Խստաշունչ ձմեռների սառնամանիքն ու ցուրտը, էլեկտրահոսանքի ու վառելիքի ճգնաժամը սարսափելի էին, իսկ Լ. Ճգնավորյանը նավթավառներ ու նավթ էր հայթայթել յուրաքանչյուր աշխատողի, նաև կոնսերվատորիայի պրոֆեսորներից շատերի համար:*

*Հիշի՛ր, հարգելի բարեկամ, մարդու հիշողությունը վատ բաները մտքից դեն է նետում, բայց հիշի՛ր, երբ մեր և ձեր տներում վառելիքը միայն մոմն էր ու չոր սպիրտը, որով միայն մեկ գավաթ սուրճ կարելի էր եփել, մենք քեզ հետ գալիս էինք Լ. Ճգնավորյանի ղեկավարած համերգներին՝ երաժշտություն լսելու, հոգևոր սնունդ ստանալու և նաև... տաքանալու:*

*Այո, այս բոլորը չէր լինի, եթե չլիներ Լորիս Ճըգնավորյան հայրենասերը:*

***(տե՛ս կազմը)***

***Բանալի-բառեր.*** *կոմպոզիտոր, դիրիժոր, Լորիս Ճգնավորյան, հասարակական գործիչ, սփյուռք, հայրենիք, հայ արվեստ, Իրան:*
***Ключевые слова:*** *Композитор, дирижер, Лорис Чгнаворян, общественный деятель, диаспора, армянское искусство, Иран.*
***Keywords:*** *composer, conductor, Loris Tchgnavoryan, public figure, diaspora, homeland, Armenian art, Iran.*

**Տեղեկություններ հեղինակի մասին**. *ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԻԿԻ (ծնվ. 17. 12. 1937 թ., Երևան), 1958 թ. ավարտել է Ռ.Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի փողային բաժնի շեփորի դասարանը՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ա.Կարապետյանի ղեկավարությամբ: 1958-1962 թթ. Մեղրիի երաժշտական դպրոցում երաժշտական տեսական առարկաներ է դասավանդել: 1967 թ. ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի փողային բաժնի շեփորի դասարանը՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Խաչատրյանի ղեկավարությամբ: 1962-1968 թթ. աշխատել է շեփորահար՝ Երևանի «Նաիրի»ն կինոթատրոնի ջազ նվագախմբում: 1962-1968 թթ. Երևանի N 32 և N 73 միջնակարգ դպրոցներում դասավանդել է երաժշտություն, գեղագիտություն և ղեկավարել երգչախումբ: 1964-1968թթ. աշխատել է շեփորահար՝ Երևանի քաղաքապետարանի «Երևան» փողային նվագախմբում, մասնակցել է շուրջ 100 համերգի: 1967-1977 թթ. աշխատել է շեփորահար՝ ՀՍՍՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի սիմֆոնիկ նվագախմբում, որի կազմում բազմաթիվ ձայնագրություններ է կատարել և մասնակցել ավելի քան 200 համերգի: 1978-1989 թթ. դասավանդել է «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա»՝ Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: 1977-2006 թթ. աշխատել է Հայաստանի ազգային ռադիոյի Երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրության երաժշտական մեկնաբան, ավագ խմբագիր: Հեղինակել է ավելի քան 4000 ռադիո ծրագիր, ինչպես նաև 120 ռադիո ծրագիր Մոսկվայի «Օստանկինո» և 250 ռադիո ծրագիր ՎԷՄ ռադիոկայանների համար: 2005 թ. Թովմասյանն արժանացել է Հայաստանի Ազգային ռադիոյի «Ոսկե գրիչ» հատուկ մրցանակին: 1992-ից դասավանդում է «Փողային գործիքների կատարողական արվեստի պատմություն» և «Փողային գործիքների կատարողական արվեստի մեթոդիկա» ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության, տեսության և մանկավարժության ամբիոնում: 2000-ից աշխատում է «Երաժշտական Հայաստան» գիտատեսական, քննադատական-հրապարակախոսական երաժշտական ամսագրի պատասխանատու քարտուղար: 2004-ից աշխատում է «ԵՊԿ հրատարակչության» բաժնի վարիչ, «Երաժիշտ» ամսաթերթի և ԵՊԿ դասախոսների ուսումնամեթոդական աշխատությունների ժողովածուի խմբագիր: Դոցենտ 2004 թ.: 2011 թ. Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտում Թ. պաշտպանել է «Նվագախմբային փողային գործիքները և նրանց կատարողականությունը Հայաստանում» թեկնածուական ատենախոսությունը և ստացել Արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Թ. հեղինակ է՝ «Կյանքի ուրվագիծ. Միքայել Խաչատրյան» գրքի, Եր., ԵՊԿ հրատ., 2004 թ., «Փողային և հարվածային գործիքներ» գիրք, 2011 թ.: Թ. ատենախոսությունների և գիտական բազմաթիվ գրախոսականների հեղինակ է, հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Նրա հեղինակած գիտական, վերլուծական, քննադատական և հրապարակախոսական ավելի քան 1000 հոդված է տպագրվել «Սովետական Հայաստան», «Սովետական Արվեստ», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ», «Հայրենիքի ձայն», «Գեղարվեստ», «Ուրբաթ», «Եթերում է Երևանը», «Եթեր», «TV-Channel», «Ալիք», «Արարատ», «Երաժիշտ», «Զրուցակից», «Երաժշտական Հայաստան», «Музыкальная Академия» (Մոսկվա), «Գրականութեան եւ Արվեստներու» և «Շիրակ» (Հալեպ), պարբերականներում և ամսագրերում: Թ. ՀՀ ժուռնալիստների (1981 թ.), ՀՀ կոմպոզիտորների (2015 թ.), Հայաստանի Թատերական գործիչների (1960 թ.) միությունների անդամ է:*

***Сведения об авторе:*** *ТОВМАСЯН ВАЛЕНТИН ХАЧИКОВИЧ (род. 17. 12. 1937). Окончил духовое отделение (труба) Государственного музыкального училища им. Р. Меликяна (класс Засл. артиста Арм.ССР А. М. Карапетяна). Преподавал специальность и теоретические предметы в музыкальной школе Мегри. С 1958 по 1962 гг. - Ереванская государственная консерватория (класс Заслуженного артиста Арм. ССР М. В. Хачатряна,1967). 1962 - 1968 - трубач джаз-оркестра к/т "Наири" (Ереван). 1962-1968 - преподаватель истории музыки, эстетики и дирижер хора в общеобразовательных школах Еревана (N32, N73). 1964-1968 работал в духовом оркестре "Ереван" мэрии Еревана, выступал более, чем в 100 концертах. 1967-1977 работал в симфоническом оркестре Государственного комитета по телевидению и радиовещанию Армении, участвуя во многочисленных записях и выступал в более чем 200 концертах. 1978-1989 - лектор "Истории исполнительского искусства духовых инструментов" и "Методики обучения игре на духовых инструментах" в Армянском государственном педагогическом институте им. Х. Абовяна. 1977-2006 - критик, рецензент и старший редактор главной редакции музыкальных передач Армянской национальной радиокомпании, автор более чем 4000 радиопрограмм, автор 120 радиопередач для радиостанции "Останкино" (Москва) и 250- для радио "Вэм" (Ереван). За работу в национальной радиокомпании присужден Специальный приз "Золотое перо" (2005). С 1992 года - лектор "Истории исполнительскоого искусства духовых и ударных инструментов" и "Методики игры на духовых инструментах" в ЕГК им. Комитаса на кафедре истории, теории исполнительства и педагогики. С 2000 года — Ответственный секретарь журнала "Музыкальная Армения", 2004-2012 -зав. отдела публикаций "Издательства ЕГК", редактор газеты "Еражишт", "Сборника учебно-методических статей". Автор книг: "Контур жизни. Микаел Хачатрян" (2004), "Медные, деревянные духовые и ударные инструменты" (2011). 2004 - доцент ЕГК им. Комитаса, 2011 - кандидат искусствоведения ("Оркестровые духовые инструменты и их исполнительство в Армении"). Автор более 1000 научных, аналитических, критических статей и рецензий в изданиях: "Советское искусство", "Советакан Айастан", "Ерекоян Ереван", "Авангард", "Голос Родины", "Пятница", "Ерекоян Ереван", "ТВ-канал", "Арарат", "Музыкант", "Собеседник", "Еражштакан Айастан" и "Музыкальная Академия" (Россия), Grakanutean Arvestneroo, "Ширак" (Сирия), принимал участие в национальных и международных научных конференциях.*

***Information about the author:*** *TOVMASSIAN VALENTINE KHACHIK, was born in 1937, December 17 (Yerevan, Armenia). He graduated from the 1958 trumpet class of Renowned Artist of Armenia Ashot Karapetian at the Brass section of Melikian Sate Musical College. He taught the trumpet and theoretical subjects at Meghri School of Music 1958-1962. He graduated from the Brass section at Yerevan Komitas State Conservatory. He was in the trumpet class of Honoured Artist of Armenia Michael Khachatrian (1967). In 1962-1968 Trumpet player at the Jazz Orchestra of Nairi Cinema, Yerevan. In 1962-1968 he was a teacher of music and aesthetics, and Choir Conductor at Yerevan secondary schools N32 and N73. 1964-1968 Trumpet player at the Yerevan Brass Band of Yerevan Municipality, performing in over 100 concerts. In 1967-1977 Trumpet player with the Symphonic Orchestra of the Armenian State Committee for Television and Radio, making numerous recordings and performing in over 200 concerts. In 1978-1989 he was a Lecturer on "History of Wind Instruments Performing Art" and "Methodology of Wind Instruments Performing Art" at the Armenian State Pedagogical Institute. 1977-2006 he was an Observer, reviewer and senior editor at the Armenian National Radio Company's Music Department, authoring more than 4,000 radio programs. He also made 120 radio programs for Moscow's Ostankino Radio and 250, for VEM Radio Company in Yerevan. For his work, the National Radio Company awarded him the "Golden Pen" Special Prize (2005). Since 1992 - Lecturer of "History of Wind Instruments Performing Art" and "Methodology of Wind Instruments Performing Art" at the Yerevan Komitas State Conservatory's Department of History, Theory and Pedagogy of Performing Arts. Since 2000 - Executive Secretary of the Musical Armenia Journal. Since 2004 - Head of Publishing Department of the Yerevan State Conservatory, Editor of the Musician newspaper and the Conservatory's collection of educational and methodological articles. 2004 Published his first book called "Contour of Life. Michael Khachatryan".In 2004 Awarded the title of Associate Professor at the Yerevan Komitas State Conservatory.In 2011 Awarded the degree of Doctor of Arts by the Institute of Art of the National Academy of Sciences of Armenia, for doctoral thesis on "Orchestral Brass Instruments and Performance in Armenia".In 2011 Published his second book called "Brass and Wind Instruments". T. has written numerous scientific reviews and participated in national and international scientific conferences. He has published over 1000 scientific, analytical, critical articles and reviews in "Sovetakan Hayastan", "Soviet Art", "Yerekoyan Yerevan", "Avant-garde", "Hayreniqi Dzayn", "Fine Art", "Friday", "Yeterum e Yerevan", "Yeter", "TV-Channel", "Channel", "Ararat", "Musician", "Interlocutor", "Yerazhshtakan" "Hayastan", "Musical Academy" (Russia), "Grakanutean yev Arvestner", "Shirak" (Syria) and other periodicals. T. has been a Member of the Journalists Union of Armenia since 1981 and the Armenia Theatre Workers Union since 1960.*

## Резюме

Доцент ЕГК, кандидат искусствоведения ***Валентин Хачикович Товмасян***. - *"Любовь к родине превыше всего"*.

Статья посвящена видному деятелю армянской культуры на родине и в Диаспоре (Иран), дирижеру, композитору Лорису Чкнаворяну. Дается характеристика его бурной дирижерской и композиторской деятельности в Армении с 1988 по 2000год. Он являлся первым исполнителем многих сочинений армянских композиторов, благодаря ему в трудные 1990-е годы Филармонический оркестр Армении около 10 лет смог сохранить свое существование и стал называться Национальным филармоническим оркестром.

## Summary

Docent of YSC, PhD Candidate ***Valentin Khachik Tovmasyan***. - *"Love towards the country above all"*.

Article is devoted to the eminent person of the Armenian culture on the homeland and in Diaspora (Iran), to the conductor, the composer Loris Chqnavoryan. The characteristic of his conductor and composer's activity in Armenia from 1988 to 2000 is mentioned in the article. He was the first performer of many compositions of the Armenian composers, due to him in difficult 1990th years the Philharmonic orchestra of Armenia could keep about 10 year existence and began to be called National philharmonic orchestra.